

Գեղարվեստական գրականության լեզվի ուսումնասիրության որոշ հիմնահարցեր

*Այունգ Անուշ
Երևանի պետական համալսարան*

«Գրական լեզու» և «գեղարվեստական ստեղծագործության լեզու» հասկացությունները սերտորեն առնչվում են:¹ Գրական լեզվի կրողները բոլոր նրանք են, ովքեր տիրապետում են նրա նորմերին: Գրողը, տիրապետելով գրական լեզվի նորմերին, դրանք, այնուամենայնիվ, կիրառում է անհատական ձևով: Սակայն ինչպե՞ս հասկանալ գրողի լեզվի անհատականությունը: Ռ. Բուդագովը գտնում է, որ այն չի կարելի համարել տվյալ հեղինակի անհատական ոճի առանձնահատկություն միայն: Անհատականությունն ի հայտ է գալիս գրողի լեզվի շատ այլ կողմերում: Ըստ Ռ. Բուդագովի գրողի անհատականություն կարելի է համարել նրա խոսքաբանությունը, նորամուծությունների կերտումը, երբեմն, տվյալ դարաշրջանին հատուկ քերականական նորմերից շեղումը, այնպիսի բառերի օգտագործումը, որոնք ձեռք են բերում արտասովոր իմաստներ: Գրողի լեզվի անհատականությունը, սակայն, չի խանգարում նրան ակտիվ մասնակցություն ունենալ իր ժողովրդի գրական լեզվի զարգացման գործընթացին:

Գրական լեզվի և գեղարվեստական ստեղծագործության լեզվի սահմանազատումն, այդուհանդերձ, չի նշանակում, որ այս երևույթները պետք է ուսումնասիրել տարանջատ: Այդպես էին կարծում, օրինակ, շվեյցարացի լեզվաբան Շ. Բալին և նրա հետնորդները: Ըստ Բալիի չի կարելի գրական լեզուն ուսումնասիրել գեղարվեստական ստեղծագործության միջոցով: Նա առանձնացնում էր առօրեական խոսքի ոճաբանությունը գեղարվեստական խոսքի ոճաբանությունից: Ըստ նրա՝ առաջինը պայմանավորվում է խոսողների կարիքներով և լեզվաբանության ուսումնասիրության առարկա է, երկրորդը պայմանավորվում է գրողի գեղագիտական ձգտումներով, որի ուսումնասիրությունն էլ առնչվում է գրականագիտության հետ: Այս մոտեցումը սակայն միակողմանի է և ոչ արդարացի:²

Ըստ Ռ. Բուդագովի գրական լեզուն ավելի լայն հասկացություն է, քան գեղարվեստական ստեղծագործության լեզուն: Ավելին, գրական լեզվի «մշակումը» հետապնդում է միայն հաղորդակցական նպատակ, այն է՝ միտքն արտահայտել այնպես, որ լսողին հասկանալի լինի: Մինչդեռ գեղարվեստական ստեղծագործության լեզուն «մշակելով»՝ գրողը հետապնդում է ոչ միայն հաղորդակցական, այլև գեղագիտական նպատակներ: Ավելին, գեղարվեստական ստեղծագործության նպատակն իրագործվում է գեղագիտական միջոցներով: Սա է գեղարվեստական ստեղծագործության լեզվի առանձնահատկությունը: Իհարկե, խոսակցական լեզվում նույնպես ձգտում են խոսել «գեղեցիկ» և շատ հաճախ մտածում են գեղագիտական ազդեցության մասին, սակայն գեղագիտական ազդեցությունն այստեղ չունի այն կշիռն ու գործառույթը, որն այն ձեռք է բերում գեղարվեստական ստեղծագործության լեզվում:³

20-րդ դարի 50-ական թթ. գեղարվեստական գրականության լեզվի ուսումնասիրությունը դեռևս չէր ձևավորվել որպես ինքնուրույն բանասիրական

գիտություն: Մի կողից այն միահյուսվում էր գրականագիտության հետ և հիմք դառնում գեղարվեստական խոսքի կամ բանաստեղծական լեզվի տեսության համար: Մյուս կողմից այն միավորվում էր գրական լեզվի պատմության հետ և ընդգրկվում լեզվաբանական ոճաբանության բնագավառ: Սակայն երկու դեպքում էլ ուսումնասիրությունը շրջանցում էր շատ խնդիրներ, որոնք չէին առնչվում կառուցվածքային լեզվաբանության հետ, բայց և հասու չէին ժամանակակից գրականագիտությանը:

Անհրաժեշտ էր ստեղծել մի յուրահատուկ բանասիրական գիտություն՝ գիտություն գեղարվեստական գրականության լեզվի մասին: Վերջինս պետք է մշակեր այնպիսի մեթոդներ և ուսումնասիրության միջոցներ, այնպիսի գաղափարներ և ընդհանուր սկզբունքներ, որոնք ապահովեին նրա խորքային ընկալումը և բարդ կառույցի գիտակցումը:⁴

Թեև գեղարվեստական գրականությունը այս կամ այն լեզվի լեզվաբանության համար նյութ քաղհանելու աղբյուր է, թեև դրա խոսքային նյութն օգտագործվում է գրական լեզվի, քերականական կառույցների, բառադարձվածային համակարգի որոշարկման համար, նաև գրական լեզվի նորմերի փոփոխությունների ուսումնասիրության համար, անհատ գրողի ոճի խնդիրը իր լուծումը չի գտնում այս լույսի ներքո: Նույնիսկ Սոսայության «լեզվի» և «խոսքի» համադրությունը օգտակար ոչինչ չի տալիս այն հարցի լուծման համար թե ինչ տեղ է գրավում անհատ գրողի գեղարվեստական ոճը գրական լեզվի ընդհանուր համակարգի մեջ:

Վ. Վինոգրադովը հանգում է այն եզրակացության, որ գեղարվեստական գրականության լեզվի ուսումնասիրությունը, կարևորվելով գրականագիտության մեջ, այնուամենայնիվ չի սպառում գրկանագիտության մասին գիտության բոլոր խնդիրները և, իհարկե, չի միաձուլվում վերջինիս հետ: Այն միայն հիմնվում է համընդհանուր լեզվի պատմության և վերջինիս բարբառների, ինչպես նաև գրական լեզվի պատմության վրա: Դրանցից դուրս այն չի կարող իրականացնել իր գործառնությունները և սահմանել իր հիմնական հասկացությունները: Իհարկե, գեղարվեստական գրականության լեզվի համար ընդունելի են այն մեթոդները, կարգային հասկացությունները, որոնց օգնությամբ ուսումնասիրվում է գրական լեզվի համակարգը, վերջինիս զարգացման օրինաչափությունները, սակայն այդ ամենը կատարվում է ոճաբանության և պոետիկայի լույսի ներքո:⁵

Գեղարվեստական գրականության լեզվի ուսումնասիրության հարցում շատ են կարևորվում հեղինակի և հերոսների կերպարների ոճաբանական կառույցի հետ առնչվող հարցերը: Հեղինակի կերպարի խոսքաբանական կառույցի մեջ են միավորվում գեղարվեստական ստեղծագործության ոճի բոլոր բնորոշումներն ու առանձնահատկությունները, շարադրանքի մի ոճից անցումը մյուսին, խոսքային գույների միահյուսումն ու ընթացքը, գնահատողական բնույթը, գործածված շարահյուսական ընթացքի յուրօրինակությունը:⁶

Հեղինակի կերպարի խոսքաբանական կառույցի հարցը շատ կարևոր տեղ է զբաղեցնում գեղարվեստական գրականության լեզվի գիտության մեջ: Երբեմն հենց այս ոճական երևույթների շրջանակի մեջ է բացահայտվում գեղարվեստական ստեղծագործության կոմպոզիցիայի կառուցվածքը: Գրողի անհատական ոճը, նրա որակական յուրահատկությունները մեծամասամբ պայմանավորում են հեղինակի այս կամ այն կերպարի կերտումը:

Այս առումով շատ հատկանշական է «Ալեքսանդրյան քառյակի» երկրորդ՝ «Բալթազար» վեպը: *The “Interlinear” novel* -այսպես է անվանվում այս գլուխը գրաքննադատների կողմից: Այս գլխում Բալթազարը, որը գրքի տվայալ մասի գլխավոր գործող անձն է, որը նաև ստեղծագործող հեղինակ է, վերծանում է գրքի նախորդ մասի գլխավոր հերոսին՝ Ժուստինային: Եվ այսպես ի հայտ են գալիս զուգահեռաբար գործող երկու հեղինակ՝ բուն հեղինակն ինքը և նրա կողմից կերտված կերպար հեղինակը, որոնք լրացնում են մեկը մյուսին, վերլուծվում մեկը մյուսով:

“I am turning out a drawer full of old mementoes and notes today in order to think about him a bit on paper; ...It is risky work, I know, but perhaps I can answer a question which you must have put to yourself when you read the opening pages of the *Interlinear*: “How could Purswarden and Justine...?” I know.”

Balthazar, p. 282

Գեղարվեստական գրականության ոճերը /հատկապես ռեալիստական գրականության/ այս կամ այն կերպ հարաբերվում են և հաճախ անմիջականորեն կապակցված են ժամանակակից լեզվի և ժամանակակից խոսքի ոճերի և ոճական երևույթների հետ: Ռեալիստական գրականության մեջ շատ հաճախ են թափանցում բարբառային, ժարգոնային և մասնագիտական բառամիավորները: Դրանք հանդես գալով կերպարների խոսքում, պատկերացում են տալիս կերպարի սոցիալական ու կրթական կարգավիճակի մասին: ⁷

Վերը նշվածը շատ վառ է արտահայտված «Ալեքսանդրյան քառյակում»: Ստեղծագործության հերոսները պատկանում են տարբեր սոցիալական խավերի, տարբեր ազգությունների /արաբներ, հրեաներ, հույներ, անգլիացիներ, ֆրանսիացի/ և ունեն տարբեր մասնագիտություններ /դիվանագետ, գրող, ուսուցիչ, գաղտնի գործակալ, գործարար և այլն/: Նրանց խոսքը հարուստ է ֆրանսերեն, արաբերեն բառերով և ժարգոնային արտահայտություններով: Հերոսները իրենց խոսքով արտահայտում են իրենց պատկանելությունը այս կամ այն սոցիալական խավին: Այսպիսով կերպարների խոսքը հաստատում է այն բնորոշումներն ու գնահատականները, որոնք արտահայտվում են հեղինակի պատմողական ոճում:

“Briefly we met here in the padded chairs, in the mirrors, before separating to go about our various tasks – Da Capo to see his brokers, Pombal to totter to the French consulate, I to teach, Scobie to the Police Bureau, and so on....”

p. 218

“Farther to the east sits god old big-bellied Pombal, under each eye a veritable diplomatic bag. ... His only preoccupation is with losing his job or being *impuissant*: the national worry of every Frenchman since Jean-Jacques. ... ‘*Dis donc, tu vas bien?*’ ... ‘*Ecoute- tu veux une aspirine?*’ or else ‘*Ou bien – j’ai une jaune amie dans ma chambre si tu veux...*’

p. 220

“And Scobie? Well, he at least has the comprehensibility of a diagram – plain as a national anthem. ...After years as a Bimbashi in the Egyptian Police ,... he has just been appointed to ... the Secret Service.

p. 221

“Here everywhere the cries of the open street greeted him and he responded radiantly. ‘*Y’alla, effendi, Scob*’... ‘*Naharak said, ya Scob*’... ‘*Allah salimak*.’”

p. 224

“And then all the primeval courtesies of the road exchanged between passers-by to which Narouz responded in his plangent voice, sounding as if it belonged to the language as much as to the place. ‘*Naharak Said!*’ he cried cheerfully, or ‘*Said Embarak!*’ as the wayfarers smiled and greeted them.”

pp. 254-256

“Toto! He is an original, a *numero*. His withered witch’s features and small boy’s brown eyes, widow’s peak, queer *art nouveau* smile. He was the darling of old society women too proud to pay for gigolos.

‘*Toto- comment vas-tu?*’ – ‘*Si heureux de vous voir, Madam Martinengo!*’

p. 219

Բացի վերը նշվածից գեղարվեստական գրանականության ոճաբանությունը և խոսքի ոճաբանությունը ներառում են նաև խոսքային արտահայտչամիջոցների ոլորտը: Խոսքային արտահայտչամիջոցների երանգներն ու համակցումները ենթարկվել են շատ ընդհանուր դիտարկումների լեզվի ոճաբանությանը վերաբերվող լեզվաբանական աշխատություններում /տե՛ս Բալիի աշխատությունը/: Մինչդեռ այս խնդիրը ավելի մեծ տեղ է գրավում գեղարվեստական գրականության ոճաբանության մեջ, որի հիմքում գտնվում են ազգային լեզվի ոճաբանությունը և խոսքի ոճաբանությունը:⁸

Ինքնըստինքյան պարզ է, որ գեղարվեստական գրականության ոճաբանության մեջ խոսքի արտահայտչական հատկանիշները վերածվում են ոճը ձևավորող միջոցների: Հեղինակի գեղագիտական հնարները նպատակ ունեն ընթերցողի երևակայության վրա ազդեցություն գործել: Գեղարվեստական գրականության մեջ արտահայտչամիջոցները, ներառելով գեղարվեստական ստեղծագործության, անհատ գրողի, գրական ուղղության ոճերի համակարգի մեջ, օգտագործվում են գրական-գեղագիտական խնդիրներ լուծելու համար:

Լեզվի և խոսքի ոճական երևույթները, հայտնվելով գրական ստեղծագործության մեջ, ենթարկվում են գեղարվեստականությանը և պայմանավորվում գրական ստեղծագործության գեղարվեստական կառուցվածքով:

Գեղարվեստական գրականության գեղագիտական հատկանիշի մեջ ներառված է գրականության /որպես քերթողական արվեստի/ այն յուրահատկությունը, որի վրա է հիմնվում գրականության երկու գործոնների – նյութի /լեզու/ և մտահղացման /գաղափար/ դիալեկտիկական միասնությունը:⁹

¹ Ու.Ա. Բուդագովը՝ իր «ԿՐՏոսպԿօ ԼջցփպվՈ՝ ՀՏԿՈվրՍՈւ խՈՑպՐՈՑցՐվօւ շջօՍՏԶ» ուսումնասիրության մեջ վեր է հանում համաժողովրդական լեզվի, գրական լեզվի և գեղարվեստական ստեղծագործության լեզվի հարաբերությունը: Նա նշում է, որ որոշ ուսումնասիրություններում գրական լեզուն նույնացվում է մի կողմից համաժողովրդական լեզվի հետ, մյուս կողմից՝ գեղարվեստական ստեղծագործության լեզվի հետ: Որոշ գիտնականներ էլ նույնացնում են գրական լեզու և ազգային լեզու հասկացությունները՝ համարելով, որ գրական լեզուն ձևավորվում է ազգի ձևավորման ժամանակաշրջանում: Մինչդեռ գրական լեզուն առանձնահատուկ հասկացություն է, որն ունի իր յուրահատկությունները, խնդիրները, որոնք ենթակա են ուսումնասիրության: Բուդագովը գրական լեզուն սահմանում է հետևյալ կերպ՝ գրական լեզուն դա համաժողովրդական լեզվի մշակված ձևն է՝ գրավոր ամրապնդված նորմերով:

Տե՛ս Բудагов Р.А. -Проблемы Изучения Романских Литературных Языков, изд. Моск. Унив.,1961, չՅ 6

² Տե՛ս Բалли Ш. Французская стилистика- перевод с фрзнци. Под ред. Эткинда, М. 1961

³ Տե՛ս Բудагов Р.А., ibid, չՑ 25

⁴ Տե՛ս Կուրադով В.В. – Наука о языке художественной литературы и ее задачи, М., 1958, չՑ. 51

⁵ Տե՛ս Կուրադով В.В. – Стилистика, теория поэтической речи, поэтика, изд. Акад. Наук СССР, М., 1963, էջ. 23-24

⁶ Խոսքային արտահայտչամիջոցների երանգներն ու համակցումները ենթարկվել են շատ ընդհանուր դիտարկումների լեզվի ոճաբանությանը վերաբերվող լեզվաբանական աշխատություններում /տե՛ս Բалли Ш., 1961/: Մինչդեռ այս խնդիրը ավելի մեծ տեղ է գրավում գեղարվեստական գրականության ոճաբանության մեջ, որի հիմքում գտնվում են ազգային լեզվի ոճաբանությունը և խոսքի ոճաբանությունը:

Ի՞նչ Կուրադով В.В. – Наука о языке художественной литературы и ее задачи, М., 1958, չՑ. 24

⁷ Տե՛ս Կուրադով В.В. – Стилистика, теория поэтической речи, поэтика, изд. Акад. Наук СССР, М., 1963, չՑ. 39

⁸ Տե՛ս Կուրադով В.В. – ibid, չՑ. 52

⁹ Տե՛ս Կուրադով В.В. – ibid, չՑ. 75

ú·ĩ³·áñÍ³Í ·ñ³Ï³ÝáóÃŪáóŸ

1. Բудагов Р.А. -Проблемы Изучения Романских Литературных Языков, изд. Моск. Унив., 1961
2. Կուրադով В.В. – Наука о языке художественной литературы и ее задачи, М., 1958
3. Կուրադով В.В. – Стилистика, теория поэтической речи, поэтика, изд. Акад. Наук СССР, М., 1963
4. Բалли Ш.- Французская стилистика- перевод с фрзнци. Под ред. Эткинда, М. 1961
5. L. Durrell- “The Alexandria Quartet” –Chapter II /Balthazar/

RESUME

The methods applied for the study of the literary language are also applied to the study of belles-lettres language, however in the light of poetics and stylistics. For the belles-lettres language such aspects as the characters of the author and the personages, the sphere of the expressive means are of preliminary importance. The aesthetic function of verbal art is based on the dialectical unity of language and purport.

РЕЗЮМЕ

Для языка художественной литературы приемлемы те же методы которые применяются в изучении литературного языка, однако в свете поэтики и стилистики. Для языка художественной литературы очень важны вопросы связанные с образами автора и персонажей, а также сфера речевых средств выражения. Эстетическая функция в произведении словесного искусства опирается на диалектическое единство языка произведения и его замысла.